



# COVID-19: Ախտանիշների ճանաչում

20 հունիսի, 2022

Ախտանիշներ		COVID-19	Մրսածություն	Գրիպ	Ալերգիաներ*
		Ախտանիշները տատանվում են մեղմից մինչև ծանր	Ախտանիշների աստիճանական առաջացում	Ախտանիշների հանկարծակի առաջացում	Կարող է լինել ախտանիշների հանկարծակի կամ աստիճանական առաջացում
Ջերմություն		Երբեմն	Հազվադեպ	Հաճախակի հանդիպող	Ոչ
Հազ		Հաճախակի հանդիպող	Հաճախակի հանդիպող	Հաճախակի հանդիպող	Հաճախակի հանդիպող (ասթմա)
Կոկորդի ցավ		Հաճախակի հանդիպող	Հաճախակի հանդիպող	Երբեմն	Երբեմն (կոկորդի և քիմքի քոր)
Շնչառություն		Երբեմն	Ոչ	Ոչ	Հաճախակի հանդիպող (ասթմա)
Հոգնածություն		Հաճախակի հանդիպող	Երբեմն	Հաճախակի հանդիպող	Երբեմն
Ցավեր		Երբեմն	Ոչ	Հաճախակի հանդիպող	Ոչ
Գլխացավեր		Հաճախակի հանդիպող	Հաճախակի հանդիպող	Հաճախակի հանդիպող	Երբեմն
Քթի հոսում կամ խցանում		Հաճախակի հանդիպող	Հաճախակի հանդիպող	Երբեմն	Հաճախակի հանդիպող
Փորլուծություն		Հազվադեպ	Ոչ	Երբեմն, հատկապես երեխաների մոտ	Ոչ
Փռշտոց		Հաճախակի հանդիպող	Հաճախակի հանդիպող	Ոչ	Հաճախակի հանդիպող

Հարմարեցված է ԱՀԿ-ի, Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների և Ալերգիայի, ասթմայի և իմունոլոգիայի ամերիկյան ակադեմիայի կողմից արտադրված նյութերից:

\*Շնչառական ալերգիաները ներառում են ալերգիկ ռինիտ (խտտի տենդ) և ալերգիկ ասթմա: Խոտի տենդի այլ ընդհանուր ախտանշանները ներառում են քթի քոր և քոր եկող, ջրոտ աչքեր:

Շատ դժվար է տարբերակել COVID-19-ի, գրիպի և մրսածության ախտանիշները: Եթե դուք ունեք որևէ վարակիչ կամ շնչառական ախտանիշներ (օրինակ՝ կոկորդի ցավ, գլխացավ, ջերմություն, շնչառություն, մկանային ցավեր, հազ կամ հոսում քթից), մնացեք տանը՝ նվազեցնելու հիվանդության տարածման վտանգը: Խորհրդատվության համար, կարող եք այցելել HealthDirect ախտանշանների ստուգիչ [www.healthdirect.gov.au/symptom-checker/tool](http://www.healthdirect.gov.au/symptom-checker/tool): Հիշեք, եթե COVID-19-ի ձեր թեստի պատասխանը դրական է, դուք պետք է անհապաղ մեկուսանաք:



Australian Government

**BE COVIDSAFE**

*Մարդիկ, ովքեր ունեն շնչառական ալերգիայի ախտանիշներ, ինչպիսիք են ալերգիկ ռինիտը (խոտի տենդը) և ալերգիկ ասթման, պետք է մնան տանը և իրենց ախտանիշների ի հայտ գալուն պես COVID-19-ի թեստ հանձնեն, եթե նրանք ունեն ախտանիշներ, որոնք անսպասելի են, սովորականից տարբեր կամ ավելի վատ են թվում կամ չեն արձագանքում իրենց սովորական դեղամիջոցներին:*

Լրացուցիչ տեղեկատվության համար, այցելեք [www.health.gov.au/covid19-translated](http://www.health.gov.au/covid19-translated) կամ զանգահարեք **1800 020 080** հեռախոսահամարով: Ընտրեք տարբերակ **8** անվճար թարգմանչական ծառայությունների համար: